

20.05.2021թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 023377/09
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, ուսումնասիրելով 20.05.2021 թվականի թիվ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և վարույթի նյութերը, քննելով թիվ գործը, ՊԱՐՉԵՑԻ

ԱՁ Շավարշ Խաչատրյանը (ՀՎՀՀ՝ 25307242, հասցե՝ ՀՀ ք. Երևան Նորք 13 փողոց 48 ՀՀ Հարկային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2021 թվականի փետրվար ամսվա ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկը, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169՝ հոդվածի 2-րդ մասով:

Պատշաճ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին, գործի վարույթին ներկայացել է անհատ ձեռնարկատեր Շավարշ Խաչատրյանի լիազոր անձ՝ Արմինե Խաչատրյանը և հայտնել է, որ ծրագրային խնդիրների պատճառով ներկայացվել է 1 աշխատանքային օր ուշացումով:

ՀՀ ՊԵԿ տեղեկատվական համակարգում առկա տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Շավարշ Խաչատրյանի կողմից 2021 թվականի փետրվար ամսվա ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկը ներկայացվել է ՀՀ Հարկային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետից 1 աշխատանքային օր ուշացումով՝ 23.03.2021թ-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ վարչական իրավախախտումը ունի նվազ նշանակություն, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 21-րդ հոդվածով, 244², 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Շավարշ Խաչատրյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:
2. Շավարշ Խաչատրյանի վերաբերյալ հարուցված թիվ վարչական վարույթը կարճել:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ



Ա. ՄԱՅԻՍԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝ Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40) Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն հանձնելու օրվանից հետո երեսույն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավագոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում: